ՀԱՅՔ ԿԵՆՍԱԳԱՂԱՓԱՐ



ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱՄԲՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ՝ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԻ ՄԵՋ

ՀԱՅՔ-ի՝ Հայկական քաղաքակրթության կենսամբողջության համար առանձնացվում է երեք հարթություն՝

Էութենական, որը վերաբերում է հայ անհատի, նրա համակեցական ձևերի (ընտանիք, համայնք, ազգ, պետություն և այլն) էության վերաճին,

Ժամանակային, որը վերաբերում է անցյալ-ներկա-ապագա եռամիսանության Նորովի արարմանը,

Տարածքային, որը վերաբերում է Հայկական քաղաքակրթության տարածքային սուբյեկտայնության վերաճին՝ Ազգային պետությունից մինչև Ազգ-պետություն

Ա/ Հայկական քաղաքակրթության կենսամբողջության հիմքը: Հայի էության հոգևոր վերաճը

Այսօր գոյություն ունեցող ճգնաժամի հիմքը վերաբերում է մարդու էությանը, որը պատճառ է դարձել անհատների ու համակեցությունների ինքնութենական քաոսի:

Ակնհայտ է, որ խնդիրն իր ողջ խորությամբ արտահայտվում է նաև՝ Հայկական քաղաքակրթության մեջ: Ավելին, այն հանգեցրել է ոչ միայն ինքնության ճգնաժամի՝ աղճատելով մեր քաղաքակրթական կենսամբողջությունը, այլև իրական սպառնալիք է ստեղծել Հայկական քաղաքակրթության ֆիզիկական գոյության համար:

Առկա ճգնաժամի բանաձևման ժամանակ պետք է հատուկ առանձնացնել այն երկու հակադիր կողմերը, որոնց միջև կոնֆլիկտը պատճառ է դարձել բուն ճգնաժամն արտահայտող ինքնութենական քաոսի: Դա մարդկային էության երկու՝ կենդանական և հոգևոր մակարդակների բախումն է, որը բանական մարդուն հստակ ընտրության առաջ է կանգնեցրել: Ժամանակակից փիլիսոփայական եզրույթաբանությամբ՝ դա մարդու մեջ գերօգտակար ռացիոնալիզմի և սուբյեկտիվ իռացիոնալիզմի հակադրությունն է, որն արտահայտվում է նյութապաշտություն, թե՞ միայն հոգևոր բավարարվածություն երկվությամբ: Պետք է փաստել, որ խնդիրն իր մասշտաբայնությամբ վերաբերելի է եղել ողջ մարդկությանը՝ իր գոյության ամբողջ ընթացքում: Այսինքն՝ բանական էակը սեփական էվոլյուցիայի անկյունադարձային հանգրվաններում միշտ կանգնել է նմանատիպ խնդրի առջև: Եվ խնդրի լուծումը դեպի հոգևոր հասունություն՝ ապահովել է գիտակից մարդու վերաճը: Ընդ որում, բանական մարդու էվոլյուցիան անցյալում, ոչ թե ապահովվել է համատարած, այլ «ընտրյալների» միջոցով: Հնագույն շրջանում դրանք մարգարեներն էին, Հին Հունաստանում՝ փիլիսոփաներն էին, միջանդարում՝ աստվածաբան-հոգևորականները, լուսավորչական շրջանում՝ գիտնական-աստվածաբանները, իսկ հետլուսավորչական շրջանում՝ «Աստվածամերժ գիտնականները»:

Եվ այսպես, յուրաքանչյուր փուլում, որոնք հիմնականում համընկել են լոկալ քաղաքակրթությունների սերնդափոխության ճգնաժամային հանգրվանների հետ,

«ընտրյալների» կողմից ձևակերպվել են մետաիրական այն սկզբունքները, որոնք կանոնակարգել են հաջորդ համակարգերում հասարակական կյանքի նորմերը։ Ըստ այդմ, ճգնաժամերի հաղթահարման արդյունքում ապահովվել է մարդկության բնականոն էվոլյուցիան՝ բանական մարդու ներքին հասունացումը։

Սակայն պետք է նշել, որ մարդկային էության ներկա ճգնաժամն աննախադեպ է և այն չի առնչվում գիտակից մարդու ներքին էվոլյուցիոն ընթացքին, այլ վերաբերելի է բուն էության փոփոխությանը։ Քանի որ Համամարդկային քաղաքակրթության կյանքի ցիկլային շարժընթացում հաջորդ փուլի անցումը հնարավոր է ապահովել հենց էության վերաճով, ինչպես առաջին փուլում այն իրականացավ մարդու բնազդային էությունից բանական էության անցմամբ։ Իսկ ճգնաժամն արտահայտող կոնֆլիկտը, ամենաընդհանուր ձևակերպմամբ, ապագայում «Հոգևոր Էակի» և «հետմարդու» կայացման հակամարտության հեռանկարն է։

Այս ամենը պրոյեկտենք Հայկական քաղաքակրթության վրա.

Մարդակային էության վերոնշյալ երկվության հակադրումն այսօր ամենասուր ձևով արտահայտվում է հայկականության մեջ՝ հասարակական կյանքի կազմակերպման բոլոր ոլորտներում։

Ընդունելով օբյեկտիվ իրականության մեջ առկա այս դուալիզմը, միաժանական պետք է նկատել, որ այն գոյություն է ունեցել մեր քաղաքակրթության գերթե ողջ կենսընթացում։ Դրանք հանդիսանում եմ մեր համակեցության (ազգ, քաղաքակրթության) կենսափիլիսոփայության սկզբունքները։

Հայ տեսակի գոյատևման ողջ ընթացքում գոյակցել են կենսափիլիսոփայության առաջին հայացքից փոխբացառող երկու սկզբունքներ՝ հավաքական-ազգայի՞ն, թե՞ անհատական-անձնային ինքնագիտակցության գերակայություն։ Դրանցից է բխել գլխավոր հարցադրումը կոնկրետ ժամանակի ու տարածության մեջ՝ ազգային, թե՞ անհատական նպատակների առաջնահերթություն։

Այդ սկզբունքներից ելնելով առանձնացվել են ազգային գաղափարախոսության երկու իրարամերժ չափորոշիչներ։

Առաջինը սահմանում է պատմական արդարության անխուսափելիության հիմնավորումը, որի արդյունքում մերժվում են աշխարհաքաղաքական իրողություններում ազգի հարմարվելու հնարավորությունները: Արդյունքում՝ նյութական կորուստները, ազգային անհաջողությունները արդարացվել են, և ազգային կենսունակությունը հաճախ ապահովվել է (այսօր էլ ապահովվում է) այսպես կոչված բարոյական հաղթանակներով: Այս պարագայում ազգային մտածելակերպի առանցքը դառնում է բարոյական իռացիոնալիզմը:

Ազգային գաղափարախոսության երկրորդ չափորոշիչը սահմանել է ազգային մտածելակերպի այլ առանցք՝ գերօգտակար ռացիոնալիզմը, երբ ազգի սոցիալական վարքը պայմանավորվել է ձևավորված իրողություններին պասիվ հարմարվելով: Այն հաճախ ունեցել է ծայրահեղ դրսևորում, որի դեպքում օտարամոլությունն է սահմանվել որպես առաջադիմության ցուցիչ, աստիճան՝ միաժամանակ դառնալով ազգի տիրապետող խավի կենցաղվարական նորմը:

Ակնհայտ է, որ այս երկու չափորոշիչները հանդիսանալով ազգային կենսափիլիսոփայության ռադիկալ դրսևորումներ, միաժամանակ փաստում են առկա պրոբլեմը՝ համատեղման ողջ դժվարությունը:

Մեր կենսափիլիսոփայական սկզբունքների ներդաշնակման, ազգային մտածելակերպի վերաճի փայլուն օրինակներ են համարվում Արտաշես Ա արքայի կողմից հողային ռեֆորմը և Գարեգին Նժդեհի կողմից կիրառված բանաձևումը: Եթե առաջինի արդյունքում ապահովվեց Հայկական քաղաքակրթության զարգացման հզորագույն շրջաններից մեկը՝ Տիգրան Մեծի գահակալության տարիները, ապա Նժդեհն ազգային կենսափիլիսոփայության վերաճ ապահովեց: Մասնավորապես, նախկինում հայ անհատի կյանքը կառուցվում էր գրեթե բացառապես «ընտանիք-աշխատանք-եկեղեցի» եռանկյունու սահմաններում, իսկ Նժդեհի կողմից այն կերպափոխվեց՝ **«Ցեղ (ազգ)-Հայրենիք-Արարիչ»** նոր, շատ ավելի բարձր մակարդակի: Այս պարագայում ակնհայտ է անհատի կյանքի նպատակի ու դրան

համապատասխան եռանկյունու գագաթների վերաճը, որը 20-րդ դարում հայկական պետականությունների կերտման գործում ունեցել է բացառիկ կարևոր ազդեցություն։

Այսպիսով, աներկբա է ազգային կենսափիլիսոփայության սկբունքների ներդաշնակման անհրաժեշտությունը։ Մեր կողմից, այդ ներդաշնակումը լիարժեք իրացնելու և առկա ճգնաժամը հաղթահարելու համար առաջարկվում է հետևյալ բանաձևը՝

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՀԱՅԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՀԱՅՔ-Ի ՀԵՏ։

ՀԱՅՔ-ը՝ որպես ամբողջական համակարգ իր մեջ ամբողջացնում է հայի և՛ հոգևոր-արժեհամակարգային, և՛ կենսատարածքային, և՛ ժամանակային ողջ ընդհանրությունը։ ՀԱՅՔը հայ տեսակի լիարժեքության ամբողջական համակարգ-մատրիցան է, որի շնորհիվ Հայկական քաղաքակրթությունն իր ապագա կենսընթացում կարողանալու է ապահովել սեփական առաքելության իրացումը։ Իսկ դա՝ քաղաքակրթական հաղորդակցիչի ստեղծարար բացառիկ գորաձառույթն է, երբ Արևմուտքից ու Արևելքից վերցվել են համամարդկային արժեքները, դրանք ներդաշնակելով սեփականի հետ, ավելի հարստացնելով փոխանցվել են հակադիր բևեռներին։

Այս ամենը պարտադրում են մեկ պարզ ճշմարտության փաստում.

Մեր Ապագան հնարավոր է միայն այն դեպքում, երբ մենք կվերադառնանք մեր քաղաքակրթական մատրիցային, կամբողջացնենք մարդկային էության դրսևորումները և կկենսագործենք նախասահմանված առաքելությանը համապատասխան։

Ազգային կենսափիլիսոփայական սկզբունքների հակադրումը պատմության ընթացքում և ներկայում, բացառապես հիմնված է եղել հայ անհատի էության երկու՝ կենդանական ու հոգևոր մակարդակների կտրուկ, անհաշտ հակադրման վրա։ Հավաքական-կոլեկտիվ սկզբունքը գրեթե միշտ կառուցվել է բացառապես հոգևոր էության վրա։

Մասնագետների մոտ տիրապետում է այն տեսակետը, որ Հայկական քաղաքակրթության շարունակականությունը (կենսընթացը), հատկապես՝ անկյունադարձային պահերին, հիմնականում ապահովվել է Հոգևոր էություն կրող եզակի նվիրյալների զոհաբերությունների շնորհիվ: Այսինքն՝ Հոգևոր էություն կրող նվիրյալների համար Աստծո ճանաչման, հավերժության ու ճշմարտության ճանաչման որոնումը հնարավորություն է տվել օծվել առաքինություններից բարձրագույնով՝ զոհաբերությամբ՝ հանուն Աստծո, Ճշմարտության, Հայրենիքի, Պետության, Ազգի, հանուն՝ Ընդհանուրի-Բոլորի: Այս ամենի համընդհանուր գիտակցման բացակայությունը պատճառ է դարձել, որ այն բնութագրվի սուբյեկտիվ իռացիոնալիզմով:

Անհատական-անձնային սկզբունքը կառուցվել է գրեթե բացառապես կենդանական Էության տիրույթում, երբ սեփականի գերադասումը՝ ընդհանուրից, միայն անձնականի բավարարման առաջնահերթությունը սահմանվել է գերնպատակ: Այս պարագայում ընդհանուրի զոհաբերությունը՝ անձնականին, ներկայացվել է ռացիոնալիզմի «արդարացումով»:

Այսօր աներկբա կարող ենք փաստել, չնայած որ Հայկական քաղաքակրթության կենսընթացն ապահովվել է հոգևոր էություն կրող անհատների զոհաբերության շնորհիվ, այնուամենայնիվ անկյունադարձային պահերին այս հակամարտությունում գերեթե միշտ «հաղթանակ» է տարել ռացիոնալզիմի վրա հիմնված ազգային կենսափիլիսոփայության անհատական-անձնային սկզբունքը: Նրանց «հաղթանակի արդյունքը»՝ այսօր մեր իրականությունն է՝ Հայկական քաղաքակրթության կենսատարածքի 9/10-ի զոհաբերությամբ (իրականության մեջ՝ կորստով) և վերջնական Ցեղասպանության իրական սպառնալիքով:

Հետևությունը մեկն է. նյութականի բացարձակ մերժմամբ՝ միայն հոգևոր էությամբ, իրականությունն արարելն անհնար է: Իսկ հոգևորի մերժմամբ՝ միայն նյութական առաջնահերթությամբ, անհնար է գոյատևել: Ըստ այդմ, անհրաժեշտ է հայ անհատի էության բնականոն վերաճ, որն ապահովվելու է էության բոլոր երեք՝

բնական, բանական ու հոգևոր մակարդակների ներդաշնակման շնորհիվ: Միայն Հայ անհատի ներքին նման հասունությունը թույլ կտա ապահովել նրա համակեցական ձևերի լիարժեքությունը, ըստ այդմ՝ ողջ քաղաքակրթության կենսամբողջությունը: Իսկ դա նաև՝ ժամանակակից ճգնաժամի հաղթահարման պարտադրանքն է՝ հիմնական բանալին:

Բ/ Հայկական քաղաքակրթության ժամանակային կենսամբողջը: Դերակատարում-նպատակադրում-առաքելություն վերաճային կենսընթաց

Հայ անհատի էության բնականոն վերաճը բոլոր երեք՝ բնական, բանական ու հոգևոր մակարդակների ներդաշնակմամբ, թույլ կտա ապահովել նրա համակեցական ձևերի լիարժեքությունը: Դրանով հանդերձ, յուրաքանչյուր հայի (նրա համակեցական ձևերի) համար հստականում է նաև այն կենսամիջավայրը, որի պայմաններում իմաստավորվում է սեփական լինելիությունը, այսինքն՝ կյանքի իմաստն ու երջանկության որոնումը: Այդ կենսամիջավայրը՝ Հայկական քաղաքակրթական կենսամբողջությունն է:

Հայկական քաղաքակրթության ապագա կենսընթացը մենք բացառապես տեսնում ենք **անցյալ-ներկա-ապագա** կենսամբողջության մեջ, որտեղ հստակ են նաև նպատակադրումները: Ըստ այդմ, Հայկական քաղաքակրթության ժամանակային կենսամբողջության համար մենք առաջարկում են ներքոհիշյալ բանաձևումը՝

- *Անցյալում - դերակատարություն՝ քաղաքակրթական բովանդակությամբ,*
- *Ներկայում - նպատակայնություն՝ ոգենորոգչական կենսագործունեության բովանդակությամբ,*
- *Ապագայում – Առաքելություն՝ Արարչակրթական բովանդակությամբ:*

Այս ամենը կարող ենք բանաձել հետևյալ կերպ.

Այսօր՝ ներկան պեղվում է ապագայից, իսկ ապագան կառուցվում է ներկայում:

Ապագան ձևավորվում է այսօր՝ ներկայում, մեր աչքի առաջ, և ժամանակն այնքան է արագացել, որ անցյալն ակնթարթորեն դառնում է ապագա, սեղմելով ներկային ու վերացնելով, լրոզելով ժամանակային սահմանները:

Հետևաբար, ներկայում Հայկական քաղաքակրթության ապագա կենսընթացը ճարտարապետելիս՝ որպես առանցք պետք է ընդունվի քաղաքակրթական ողջ ժառանգությունը: Այսինքն՝ առանց անցյալ չկա ապագա, իսկ ներկան՝ միայն կամուրջ է այս հարահոս ընթացքում: Ընդ որում, պետք է հստակ փաստել, որ անցյալի՝ պատմականության գործոնն ինքնին դարձել է բախման առանցք ներկա ճգնաժամում:

Հակահամակարգն օգտվելով համաշխարհայնացման հնարավորություններից, համահարթեցման և շաբլոնացման միջոցով, փորձում է անհատներին, ազգերին, քաղաքակրթություններին զրկել պատմական հիշողությունից: Վերջինիս միջոցով հնարավոր կլնի կտրել անցյալի նկատմամբ պատասխանատվության կապերից, իսկ այդ պարագայում՝ ներկայի միջոցով ապագայի կառուցումը հնարավոր է ցանկացած սցենարով: Այսինքն՝ երբ չկա պատմական հիշողություն, չկա սերունդների՝ նախնիների նկատմամբ պատասխանատվություն, ապա մարդը կարող է վերափոխվել «հետմարդու»: Ընդ որում, այս ձգտումը կարելի է համարել ժողովրդավարության գծային արդիականացման հիմնական քաղաքական գիծը:

Ակնհայտ է, որ բախման մյուս սուբյեկտի՝ Արարչական համակարգի համար, պատմականությունը՝ անցյալի արժևորումը հիմնարար գործոն է հանդիսանում, ոչ միայն ներկայի, այլև ապագայի կառուցակազման համար: Պատմականության միջոցով է փոխանցվում սեփական առաքելության գիտակցումը, որը անհատների, նրանց համակեցական ձևերի համար հստակ սահմանում է պատասխանատվություն՝ անցյալ-ներկա-ապագա ամբողջությունում:

Ըստ այդմ, կարող ենք եզրակացնել.

Անցյալի արժևորումը ներկայում, նրա նշանակությունը՝ ապագայում, ոչ թե սոսկ իռացիոնալ է, այլ ունի նաև խիստ ռացիոնալ բաղադրիչ: Քանի որ ներկայում թույլ է տալիս պատասխանատու վարք ձևավորել, ոչ միայն անցյալի, այլև ներկայի ու ապագայի համար: Ազգային հիշողությունը՝ սեփական կենսաձևի սոցիալական փորձի փոխանցումն է, որը արդիականացվելով ներկայում՝ հենադաշտ է դառնում ապագայի համար:

Պետք է շեշտել նաև, որ «. . . Պատմությունը պետք է ունենա ընտրելու իրավունք: Այսինքն՝ պատմությունից պետք է վերցվի այն, ինչ պետք է ներկայում՝ ապագան կառուցելու համար. . .»:

Այս պնդումը, ներկայում աքսիոմատիկ նշանակություն է ձեռք բերում, քանի որ, տեղեկատության փոխանակման ներկա պայմաններում, հնարավորություն կա

կասկածի տակ դնել պատմության ցանկացած դրվագ, ցանկացած իրողություն։ Այսպես կոչված՝ պատմության բազմակի վերլուծության, իբր քննադատական մեթոդաբանության, այսօր, մոդայիկ դարձած մոտեցումների արդյունքում սկեպտիկ վերաբերմունք կարելի է ձևավորել ազգային հիշողության առանցքը կազմող պատմական ցանկացած իրադարձության նկատմամբ, կարելի է նսեմացնել, արժեզրկել պատմական ցանկացած իրադարձություն ու հերոսի, յուրաքանչյուր դեպք ու դեմք։ Այսինքն՝ կարելի է ամբողջապես ոչնչացնել (արդեն գրեթե ոչնչացրել են) ազգային հիշողության հիմնասյուները։

Հետևաբար.

Ներկայում՝ ապագա համակարգի կառուցման համար անհրաժեշտ տեղեկատվության մեջ պատմականության գործոնն ունի բացառիկ կարևոր նշանակություն, քանի որ թույլ է տալիս ժառանգական մեկ ամբողջության մեջ դիտարկել համակարգի ապագա կենսընթացը։ Իսկ պատմականությանը վերաբերող տեղեկատվությունը պետք է ունենա ընտրության իրավունք՝ համապատասխան ապագայի նպատակադրումների բովանդակությամբ։

Այս ամենի հիմքով պետք է դիտարկվի Հայկական քաղաքակրթության կենսաբողջության ժամանակային հարթությունը։

Անցյալ-ներկա-ապագա ամբողջության մեջ անցյալը դիտարկվում է Հայկական քաղաքակրթության դերակատարության տեսանկյունից, որի ժառանգականությունը պետք է ներկայի նպատակադրման համար։

Հայկական քաղաքակրթության ժառանգականության համար պետք է շեշտադրել հետևյալ հանգույցները.

- Մոտ 10000-12000 տարի առաջ Հայկական լեռնաշխարհում տեղի ունեցած մարդկության առաջին արտադրական հեղափոխությունը, երբ երկրագործության-հողագործության միջոցով հնարավոր եղավ հավաքչությունից ու որսորդությունից անցնել նստակյաց կյանքի։ Ցորենի և այլ մշակաբույսերի մշակումը, վայրի կենդանիների ընտելացումը՝ ձևավորեցին այն հիմքը, ըստ որի սպառող

հասարակությունից՝ անցում կատարվեց արտադրող հասարակության։ Այսինքն՝ մարդկային բնազդային էությունը՝ վերաճեց գիտակցական էության։ Ըստ այդմ, մեկնարկ տրվեց Համամարդկային քաղաքակրթության երկրորդ՝ ձևավորման փուլին։ Համապատասխան մեր կողմից նախորդիվ առաջ քաշած գիտական պարադիգմի, հենց այս ընթացքը դարձավ բաժանարար գիծ՝ մարդկության նախաքաղաքակրթական և քաղաքակրթական ընթացքների միջև, որն իր հերթին գերարժևորվում է մարդկային էության վերաճով։ Այսպիսով, Հայկական քաղաքակրթությունը հանդիսանում է մարդկության նախասահմանված ընթացքի՝ էվոլյուցիայի ապահովման հիմնական դերակատարներից մեկը։

- Հաջորդ հանգուցային կետը վերաբերում է Արիական համակարգի սկզբնավորմանը։ Հայկի հաղթանակը Բելի նկատմամբ, ըստ էության, ապահովեց գիտակցական էակի հետագա վերաճը։ Արարչական նախախնամությանը համապատասխան ապահովվեց հասարակական կյանքի կազմակերպման երկու հիմնասյուների՝ Ազատության և Արդարության Արաչական կենսիմաստի ընկալումը։ Այստեղ մենք խնդրին չենք մոտենում պատմական փաստագրությամբ ամեն ինչ ապացուցելու տեսանկյունից։ Առավել ևս, որ Հայկական լեռնաշխարհը, որպես հնդեվրոպական և արիական քաղաքակրթության նախահայրենիքի, գիտական ապացուցմանն անդրադարձել ենք մեր նախորդ աշխատություններում՝ Հայկական քաղաքակրթության համակարգաստեղծ բաղադրիչներից՝ տարածքային գործոնի վերլուծության ժամանակ։ Այսինքն՝ Հայկի կենսագործունեության առասպելաբանական կամ պատմական իսկության ապացուցման խնդիրը չի հանդիսանում մեր նպատակը, այլ այս հանգուցային կետի կենսիմաստային նշանակությունը։ Հայկի միջոցով Արարչական համակարգը հաղթանակ տարավ Բելի՝ հակահամակարգի նկատմամբ։ Դա նշանակում է, որ մարդկության նախասահմանված՝ բնական էվուլյուցիայի կայացման համար անհրաժեշտ հերթական ճգնաժամում, Հայկական քաղաքակրթության միջոցով է ապահովվել համապատասխան վերաճը։ Եվ Արիական համակարգի սկզբնավորումը հիմք

հանդիսացավ, որպեսզի մարդկությունն Արարչաճանաչողության միջոցով սահմանի ճշմարտության, արդարության, ազատության, կատարելիության և երջանկության որոնման հավերժական ճանապարհը։

- Երրորդ հանգուցային կետը՝ Քրիստոնեության ընդունումն է, որի միջոցով, ինչպես ձևակերպում են մեր պատմիչները, ապահովվեց Հայկական քաղաքակրթության Մեծ Դարձը։ Մենք բացարձակ համոզմունք ունենք, որ Առաջին Քրիստնեա Երկիրը դարձել ենք ոչ թե պատմական իրադարձությունների, այլ նախասահմանված առաքելության տրամաբանությամբ և սեփական հասունության իրացման անհրաժեշտությամբ։ Այսինքն՝ մարդկության ճգնաժամային հերթական հանգրվանում, համակարգի և հակահամակարգի հերթական բախման ընթացքում, Հայկական քաղաքակրթության միջոցով է ապահովվել Արարչական համակարգի հաղթանակը և Նորի կայացումը։ Ըստ այդմ, 301 թվականը հանդիսանում է Համաշխարհային քաղաքակրթության կյանքի ցիկլային շարժընթացի չորրորդ՝ կրոնական փուլի մեկնարկը, որի շնորհիվ իրենց կենսագործունեությունը սկսեցին Լոկալ քաղաքակրթությունների չորրորդ սերունդը։ Այսինքն՝ քրիստոնեության միջոցով ապահովվեց Նոր համակարգի կայացման համար անհրաժեշտ ինֆորմացիան և էներգիան։ Ըստ այդմ, Քրիստոսի՝ Աստծո Որդու կողմից (շնորհիվ) սահմավեց Արարչաճանաչողության նախասահմանված նոր ընթացքը, որը հնարավոր էր կայացնել քրիստոնեական բարոյականության կենսակերպի միջոցով։ Մեր հետազոտական խնդրից ելնելով՝ հենց վերոնշյալ տրամաբանությամբ ենք մոտենում մեր պատմության այս նշանավոր հանգույցին։ Ավելին, հենց այդ հիմքով է հնարավոր նաև հաղթահարել հայկականության մեջ, մեր կարծիքով արհեստական նետված այն վեճը, որը վերաբերում է նախաքրիստոնեական և քրիստոնեական ժառանգության հակադրմանը։ Ըստ այդմ, Քրիստոնեության միջոցով մենք ոչ միայն չենք հեռացել մեր իրական՝ Արիական (Արարչական համակարգից), այլ ընդհակառակը՝ այդ համակարգի ծիրում ապահովել ենք անհրաժեշտ վերաճը՝ բնական էվոլյուցիան։

Այսպիսով, մեր քաղաքակրթական կենսընթացի այս երեք հանգույցները՝, նախաարիական, արիական՝ նախաքրիստոնեական և քրիստոնեական համակարգերը պետք է դիտարկել օրգանական մեկ ամբողջության մեջ՝ Աստվածաճանաչողության հիմքով: Դրանք հանդիսացել են մարդկային էվոլյուցիայի համար անհրաժեշտ ճգնաժամն հաղթահարելու մեկնակետեր, ընդ որում, ոչ միայն Հայկական քաղաքակրթության, այլև ողջ մարդկության համար:

Հատուկ ընդգծենք, որ առաջին հանգուցային մեկնակետը ընդհանրապես համարվում է մարդկության նախաքաղաքակրթականից՝ քաղաքակրթական կենսընթացի սկզբնավորման ակունքը: Միայն բնազդային պահանջմունքները բավարարող սպառող տեսակից անցում կատարվեց բանական էությամբ՝ արտադրող տեսակի: Այսինքն՝ Հայկական քաղաքակրթության բացառիկ դերակատարմամբ է իր նախասահմանված կենսագործունեությունն ապահովել բանական մարդը՝ գիտակցական էությամբ:

Իսկ հաջորդ երկուսը՝ գիտակցական մարդու ներքին էվոլյուցիայի համար անհրաժեշտ հանգուցային կետերն էին, որոնք մեկ օրգանական միասնությամբ ապահովել են բանական մարդու ներքին՝ հոգևոր հասունությունը:

Մեր քաղաքակրթական կենսաբողջության մեջ, անցյալում դերակատարման հանգուցային կետերը փաստարկելուց հետո, հստակ է դառնում ներկայի նպատակադրումը: Այսինքն՝ մեր պատմական դերակատարման ժառանգականության հիմքով կարող ենք ներկաարարել ապագան: Այն է.

Հայկական քաղաքակրթության ապագայի համար ելակետը՝ Հոգևոր Նոր Դարձն է՝[1] Վերադարձ մեր համակարգին՝ Վերադարձ Արարչական համակարգին: Միայն այդ պարագայում հնարավոր կլինի ապահովել ներկա ճգնաժամի հաղթահարման պարտադիր պայմանը՝ մարդկային էության (նրա համակեցական ձևերի) վերաճը՝

[1] Ժամանակակից Հոգևոր Դարձի գաղափարաբանական ողջ հիմքը ամբողջացված է «Արարչական Կենսականոնագիր» 1-ին մատյանում, իսկ գործնական իրացման մեխանիզմները ամբողջացված են «Արդարության հիմքով Ազգային պետության ճարտարապետման նախագիծ» գրքում (նաև՝ սույն գաղափարական փաստաթղթերի 9-րդ մասում):

բանական էության հասունացումը՝ հոգևոր էությամբ, որի շնորհիվ կամբողջանա մարդկային էության բոլոր երեք մակարդակները՝ բնական, բանական և հոգևոր։

Դրա հիմքով, Հայկական քաղաքակրթությունը կկարողնա հաղթահարել ներկա ճգնաժամը՝ ապահովելով մարդկության քաղաքակրթական ընթացքից անցում՝ Արարչակրթական կենսընթացին։ Այնպես, ինչպես ժամանակին ապահովել է նախաքաղաքակրթականից քաղաքակրթականի անցումը։

Այս տրամաբանության պարտադրանքով, անհրաժեշտ է ներկայի առաջնային նպատակ սահմանել համակեցական կյանքի կազմակերպման այնպիսի ձևը, որն ապահովելու է Հոգևոր Էակի կայացումը՝ ոլորտային, տարածական ու ժամանակային դրսևորման բոլոր առումներով։ Մենք այդպիսի համակարգի ձևավորման ելակետը համարում ենք Ազգային պետության հիմնադրումը։ Ազգային պետություն ասելով, մենք ոչ թե ի նկատի ունենք անվանումը, այլ ներքին համակեցական վիճակը, որը թույլ կտա հասարակական կյանքի կայացման հիմնական՝ մշակութայնացման, տնտեսական ու քաղաքական ոլորտներով այսօր ապահովել հայի էության հոգևոր վերաճը, ըստ այդմ նաև՝ ողջ հայության՝ հայկականության քաղաքակրթական վերաճը։ Ազգային պետության հիմնադրմամբ միայն կարող ենք ձեռք բերել քաղաքակրթական սուբյեկտայնություն և էութենական այս պատերազմում հստակ նույնականալ Արարչական համակարգի հետ։ Ազգային պետությունը ներկա ճգնաժամն արտահայտող բնական ու արհեստական քառսում պետք է դառնա մեր Տապանը։

Այսպիսով, Հայկական քաղաքակրթության ժամանակային կենսամողջության համար հստակ է դառնում հետևյալ բանաձևի ամրագրումը՝

Քաղաքակրթական ժառանգականության հիմքով այսօր նպատակադրել ապագայի Արարչակրթական կենսընթացը, որի իրացումը հնարավոր է բացառապես Հոգևոր Դարձի միջոցով՝ Վերադարձ մեր ազգային մատրիցային, այսինքն՝ Վերադարձ Ապագա։

Գ/ Հայկական քաղաքակրթության տարածական կենսամբողջը։

Ազգային պետություն – Ազգապետություն - Ազգ-Պետություն վերաճային կենսընթացը

Հայկական քաղաքակրթության կենսաբողջության խճանկարն հավաք դարձնելու համար անհրաժեշտ է դիտարկել նաև նրա դրսևորման տարածական չափումները: Այսինքն՝ քաղաքակրթության էութենական և ժամանակային կենսամբողջությունն իրական կյանքում կայացնելու համար անհրաժեշտ է այն նյութականացնել կոնկրետ տարածության մեջ, որը հնարավոր է բացառապես «Պետություն» համակեցական ձևի միջոցով:

Այս համատեքստում շեշտենք, որ յուրաքանչյուր համակեցություն, ունենալով քաղաքակրթական ինքնատիպության համակարգաստեղծ սեփական բաղադրիչները, քաղաքակրթական կարգավիճակ է ձեռք բերում միայն «պետություն» համակեցական միավորի պարագայում: Այսինքն՝ «պետություն» հասկացության բազմաչափ և բազմամակարդակ ընկալումներում առանձնակի արժեք է ձեռք բերում նրա քաղաքակրթական չափումը: Դրա համաձայն, **պետությունը** դիտարկվում է **մարդկային գործունեության ենթակարգային ձևերն ընդհանրացնող համակեցության բարձրագույն տիպ (նախավերջին), որը ձևավորվում է կոնկրետ աշխարհագրական տարածքում մարդկային հարաբերությունների կարգավորման անհրաժեշտությունից:**

Այսինքն՝ **պետությունը մարդկային համակեցության բնականոն էվոլյուցիայի արդյունքում ձևավորվող իրողությունն է, երբ տարածաժա-մանակային ընթացքի *հասունության* մակարդակը թույլ է տալիս *ինստիտուցիոնալացնել սեփական արժեքների* ստեղծման, իրացման, վերարտադրման և պահպանման համակարգը:**

Հենց այս իրողությամբ է պայմանավորված «պետություն» համակեցական միավորի առանձնահատուկ դերը ժամանակակից ճգնաժամում: Այսինքն՝ պետություն ինստիտուտը հայտնվել է համակարգի և հակահամակարգի բախման առանցքում և դարձել է հակահամակարգի հիմնական թիրախը՝ մարդուն

սոցիալական կապերից ու պատասխանատվություններից կտրելու նպատակադրմամբ, երբ մարդը վերածվում է կառավարելի ազատ ատոմի։ Իսկ հակահամակարգի կողմից իրականացվող նախագծերում առավել քան ակնառու է պետությունների և մարդկային համակեցությունների ապամոնտաժման քաղաքականությունը։ Փաստել ենք նաև, որ բազմաթիվ կոնվենցիաների միջոցով, ազգային պետություններն իրենց շատ գործառույթներ ստիպված են զիջել վերազգային կառույցներին, որոնք անմիջական վերահսկողություն ունեն հասարակությունների և մարդկանց ամբողջական վարքագծի կառավարման վրա։ Իսկ դա արդեն կարող է ապահովել անխոչընդոտ ուղի՝ հակահամակարգի մշակութացման կոդերի կայացման համար, որն ուղիղ ճանապարհ է դեպի «հետմարդու» կեղծգիտական ու անտիուտոպիական իրականություն։

Հետևաբար.

Ժամանակակից ճգնաժամում Ազգային պետությունները հանդիսանալու են Արարչական համակարգի կողմից առկա քաոսը հաղթահարելու ուժային կենտրոններ, քանի որ նրանց միջոցով է հնարավոր պահպանել և վերարտադրել քաղաքակրթական ողջ ժառանգությունն ու բազմաձևությունը։ Այսպիսով, ազգային պետությունները դառնում են մարդկային բնականոն էվոլյուցիան ապահովող հիմնական գործիքը։

Բացի դրանից, հենց Ազգային պետությունների կայացմամբ է հնարավոր ներկայում արարել ապագան։ Ըստ այդմ, Ազգային պետության բովանդակությամբ ու ձևով պետք է սահմանել ապագա հասարակարգի բնույթը, որն ամբողջանում է նրա մշակութայնացման, տնտեսվարման ու կառավարման մոդելներով։ Հետևաբար, ժամանակակից Ազգային պետությունները պետք է ձևավորվեն ապագա համակարգի (հասարակարգի) կայացման համար անհրաժեշտ ինֆորմացիայի, էներգիայի ու մատերիայի տրամաբանությանը համապատասխան։

Այս համատեքստում, պետք է հատուկ ընդգծել, որ Ազգային պետությունները պետք է ապահովեն Արդարության և Ազատության վերիրական սկզբունքների

ներդաշնակումը և իրացումը՝ կոնկրետ տարածության ու ժամանակի մեջ, կոնկրետ մարդկային հարաբերությունների կարգավորման ոլորտում՝ թե՛ ներքին, և թե՛ արտաքին հարաբերություններում։ Գաղափարական փաստաթղթերում հստակ ներկայացված է, որ մարդկային էության մակարդակներին համապատասխան են ընկալվում և իրացվում բուն Արդարությունն ու Ազատությունը։ Իսկ այդ ենթակարգային համակարգում ամենաբարձրը Հոգևոր էությունն է ու դրան հասանելի Արդարության ու Ազատության ընկալումը, որոնք ունեն վերիրական (Արարչական) հիմքեր, ուստի չեն կարող տարբերակվել ո՛չ անձ-անհատների, և ո՛չ էլ պետություն-հասարակությունների պարագայում։

Շեշտենք նաև, որ այսօր պետությունների նպատակայնության առաջնահերթությունը՝ Ազատությունն է, որը ժամանակին խզվելով բուն Արդարությունից, խորքի մեջ ենթարկվեց մուտացիայի՝ դառնալով նույն ազատ մարդկանց համար մեծագույն չարիք։ Այսօր, թե՛ միջազգային, թե՛ ներպետական, և թե՛ նույնիսկ միջանձնային հարաբերություններում ամենասակավը, հետևաբար, ամենապահանջվածը Արդարությունն է։ Հենց Արդարության, Ճշմարտության պակասն է պատճառ դարձել ներկա ճգնաժամի և նրա ապարժեքային քառսի արտահայտման։ Հետևաբար, Ազգային պետությունների ձևավորման հիմքը պետք է լինի Արդարությունը։

Այսպիսով, **մեր կողմից առաջարկվող ժամանակակից ՀԱՅՔ Ազգային պետությունն իր էութենական ու երևութական՝ բովանդակության ու ձևի ամբողջության մեջ, պետք է խտացնի ապագայամետ այն առաքելությունը, որը նախասահմանված է Արարչական համակարգի կողմից։ Նման ազգային պետությունների միջոցով է ապահովվելու ներկա ճգնաժամի հաղթահարումը և Համամարդկային քաղաքակրթության կյանքի ցիկլային շարժընթացի հաջորդ փուլի մեկնարկը, որը սահմանված է՝ որպես Արարչակրթական կենսընթաց։**

Այսպիսով.

Հայկական քաղաքակրթության կենսամբողջության ու նրա լիարժեք կենսընթացն ապահովելու համար՝ որպես ելակետ պետք է ընդունել Ազգային Պետության հիմնադրումը:

Ըստ այդմ, Հայոց Ազգային Պետությունն իր խորքային դրսևորման ամբողջության մեջ պետք է սահմանել՝ որպես պատմական ներկա ժամանակահատվածում հայոց ազգային ինքնության, այդ ինքնության հիմքը հանդիսացող արժեքային համակարգի վրա քաղաքական, տնտեսական, իրավական, հասարակական, սոցիալական և այլ ինքնակազմակերպման ու ինքնակառավարման ձևերի փոխկապակցված, փոխլրացնող, համընդհանուր և ամբողջական կենսագործուն համակարգ՝ հանուն հայոց ազգի առաքելության, դրանից բխող համազգային նպատակների, իղձերի ու երազանքների իրականացման:

Հայոց Ազգային պետության վերաճը՝ տարածության մեջ ենթարկվում է մասշտաբային չափումների: Մենք առանձնացնում ենք (նպատակադրում ենք) եռաչափ հետևյալ ենթակարգությունը.

- Ազգային պետության հիմնում ներկա պետականության տարածական սահմաններում: Այս պարագայում խոսքը վերաբերում է Հայաստանի Հանրապետության (Արցախը ներառյալ) կերպափոխային վերաճին, որի արդյունքում է ձևավորվելու Հայոց Ազգային Պետությունը կամ Հայք քաղաքակրթական սուբյեկտը:
- Երկրորդ մակարդակը վերաբերում է Ազգային պետության կայացմանը՝ մեր ողջ քաղաքակրթական արեալում՝ Հայկական լեռնաշխարհում: Այս պարագայում արդեն կարող ենք խոսել Հայոց Ազգապետության մասին, որպես՝ տիտղոսակիր ու պետականակերտ քաղաքակրթական սուբյեկտի:
- Երրորդ մակարդակն ունի համամոլորակային ընդգրկում՝ ողջ հայկականության մասշտաբով: Այս դեպքում հնարավոր է կայացնել Ազգ-Պետություն համաշխարհային սուբյեկտը:

Այսպիսով, առավել քան հստակ է դառնում տարածության մեջ Հայկական քաղաքակրթական կենսաբողջության ապահովման բանաձևը՝

Ազգային պետություն - Ազգապետություն - Ազգ-Պետություն վերաճային կենսընթացը։

Ակնհայտ է, որ այս ամենի կայացումը հնարավոր է միայն Ազգակեցական միասնական հիմքով, որի տարածական դրսևորումը ունենալու է վերաճային նույն տրամաբանությունը՝ ներկա Հայաստանից՝ Հայկական Լեռնաշխարհով՝ մինչ համաշխարհային ընդգրկում։ Ազգակեցությունն իր մեջ խտացնելու է և՛ ազգի լինելիության Արարչական ողջ կենսիմաստը, և՛ ազգային ողջ կենցաղավարությունը, այսինքն՝ կոնկրետ երևութական դրսևորումները։

ՀԱՅՔ կենսագաղափարի՝ Հայկական քաղաքակրթական կենսաբողջության համար անհրաժեշտ ենք համարում համակարգված ձևով ներկայացնել մեր ապագա կենսընթացի հստակ նպատակադրումները՝ իրենց բազմաբովանդակ ու բազմամակարդակ չափումներով հանդերձ։ Շեշտենք, որ նպատակադրումների ամբողջության համար հիմք են ծառայել մեր ծածկագրված կոդերի վերծանումն ու դրանց ժամանակակից արդիականացումները։[2]

Ըստ այդմ, ամեն ինչ կառուցակազմված է հստակ տրամաբանությամբ ու ենթակարագությամբ.

Մեր մետաքաղաքակրթական կոդերի վերծանումները թույլ են տվել ստանալ մետամշակութային կոդերը, իսկ վերջիններիս վերծանումներն արդեն ամբողջացնում են մետաքաղաքական առաջնահերթությունները, որոնց համապատասխան էլ առաջարկվում է Ապագա Համակարգի կայացման սուբստանտների Էությունն ու բնույթը։

Ներկայում մեր Ապագա կենսընթացի համար առանձնացվում է ներքոհիշյալ ենթակարգությունը.

---

[2] Հայկական քաղաքակրթության առաքելությունը սահմանող մետաիրական կոդերի վերծանմանն ու ժամանակակից արդիականացման է նվիրված «Արարչական Կենսկանոնագիր» 1-ին Մատյանի 6-րդ և 7-րդ Արարները։

1. **Մետանպատակ**

Արարչականություն: Աստծո Արքայության հաստատում: Այն ներառում է Հայկական քաղաքակրթության Մետաքաղաքակրթական ծածկագրի բովանդակությունը և առավելագույն նպատակը:

2. **Մեգանպատակ**

Համարարչականություն: Աստծո Կամքի ճանաչում և կայացում: Ենթակարգությամբ երկրորդ մակարդակն է, որը ներառում է մետամշակութային հիմնական կոդի բովանդակությունը:

3. **Գերնպատակ**

Արդար Աշխարհակարգի կայացում: Մետաքաղաքական հիմնական կոդն է, որը բխում է Մետամշակութային կոդի վերածանումից: Արդար Աշխարհակարգը՝ Ապագայի Աշխարհակարգն է, որը կենսագործելու են Համամարդկային քաղաքակրթության առաջնային սուբյեկտները՝ Արդարություն արարող լոկալ քաղաքակրթությունները: Ըստ այդմ, Հայկական քաղաքակրթության ապագա կենսընթացի համար որպես Գերնպատակ սահմանվում է սուբյեկտայնության նման կարգավիճակը, որը հնարավոր է իրացնել սեփական մատրիցային վերադառնալու պարագայում՝ ենթակարգային ցածր նպատակադրումների լիարժեք իրացման դեպքում: Դրանք են.

4. **Մեծ նպատակ**

Հայկական «Ազգ-պետություն» համամոլակային սուբյեկտի կայացում:

5. **Բարձրագույն նպատակ**

Ազգապետության կայացում՝ մեր պատմական հայրենիք–քաղաքակրթական արեալի կենսատարածքում:

6. **Բարձր նպատակ**

Ազգային պետության հիմնադրում Հայաստանի ներկա պետականության (Արցախը ներառյալ) սահմաններում: Ազգային պետությամբ հնարավոր կլինի մեկնարկել Ապագայի ներկաարարումը՝ իրագործման համապատասխան

մեխանիզմներով։ Վերջիններիս համար մենք առանձնացնում ենք.քաղաքական ոլորտում՝ **Աշխարհաժողով կենսահայեցակարգի** ներդրում, տնտեսական ոլորտում՝ **Հիմնադրամային տնտեսվարման կենսահայեցակարգի** գործարկում, իսկ մշակութայնացման ոլորտում՝ **Հոգևոր-ոգեղեն էակի կայացման կենսահայեցակարգի** իրացում։

7. <u>Առաջնային նպատակ</u>

Հոգևոր հեղափոխություն (բարեշրջություն) - Հոգևոր Դարձ - Ոգենորոգչական կենսընթաց՝ Ազգային պետության հիմնադրման նպատակադրումով (Մանրամասն կանդրադառնանք այս գլխի վերջին բաժնում)։

Ըստ այդմ, Հոգևոր հեղափոխությունը մենք համարում ենք Առաջնային նպատակի կայացման առաջնային քայլը, որի իրացումը պետք է մեկնարկեր դեռ երեկ.